

ՊԱՅՄԱՆՔ

Տարեկան դին և Պոլսոյ համար	430 72
» Գաւառաց	» 160 »
» Օտար երկիրներու	» 180 »
վեցամսեայ և Պոլսոյ	» 73 »
» Գաւառաց	» 80 »
Իւրաքանչիւր թերթի դին	60 փե
Ծանուցման տողը մէկ անգամի հա-	
մար 2 դուրուշ, երկու անգամի հա-	
մար 60 փարսոյ, աւելի անգամներ-	
ու համար 40 փարսոյ :	



Լ Ր Ա Պ Ի Ր

ԻՍՂԱԲԱԿԱՆ ԱՂԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ՊԱՅՄԱՆՔ

Դուրս գացած լրագրաց ճանրու-	
ծախքը խաղաղութեան վրայ է :	
Լրագրոյս վերաբերեալ նամակ	
կամ որ եւ իցէ դրամ խաղաղի-	
ր—Տնօրէնին պիտի ուղղուի, և Պո-	
լիս, Չիլիի խան, Մասիսի գրասեն-	
նակը :	
Ճամբու ծախքը չվճարուած նա-	
մակ չընդունուիր :	

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 49 ՍԵՊՏԵՄԲԵՐ

ԻՍՂԱԲԱԿԱՆ

Խաղաղութեան յոյսերուն այս ան-
գամ դարձեալ ցրեւին ի վեր պատե-
րադմական նշանաւոր գէպը մը պա-
տահած չկայ բայց ի թուի եւ Սթրաս-
պուրի անձնատուութիւններէն որք
արդէն ժամէ ի ժամ կ'սպասուէին :

Անկեալ կայսրութիւնն իր ամեն
անխոհեմութեանց եւ աննախատե-
սութեանց հետ երկրին սահմանադը-
լունները պահպանող բերդաքաղաք-
ներն ալ ըստ արժանոյն չէր ամրա-
ցուցած եւ առատ պաշարներով ա-
պահոված : Հետեւաբար տարակոյս
չկար որ անոնց մէջ դանդաղ պահա-
պան զօրաց արեւական դիմադրութիւ-
նը վերջապէս անօթութեան չգլխա-
նալով, պատերազմական պաշար չու-
նենալով, պիտի ընկնէր Այսպէս ե-
ղան Սէտան, Թուր եւ Սթրասպուրի :

Սակայն Մէջի համար կըսուի թէ
Ռէնի բանակին համարանայն ըլլալով
մէջը լատ պաշար եւ պատերազմական
մթերք կան, որով կրնայ երկար ժա-
մանակ տակալ պաշարման : Եթէ այս
ըսին ալ մինչեւ հիմա Գաղղիացի
կողմէ լուսանկարուն պէս սուտ ել-
նէ, եթէ Մէջ ալ որ Գերմանացի
150000 զօրքն իր չուրջն զբաղեցուցած
է, Սթրասպուրի թուրք եւ Սէտանի
պէս պաշարի չգոյութեան պատ-
ճառու անձնատուր ըլլայ, Գաղղ-
իացացի փրկութեան յոյսն ի սպաս
կը կորնայ : Այլ բնաւ արդէն չը մնար
Բրուսիացի իրենց բոլոր զօրութիւ-
նը փարիզի շրայ թափելու եւ 5-600
հազար զօրաց հեղեղի մը ներքեւ զայն
ալ խեղդելու :

Գաղղիոյ հարաւային եւ արեւմտե-
կան դաւառացի մէջ զինուորական
պատրաստութիւններն ամենամեծ փու-
թով յառաջ կը տարուին : Չինոց
գործարաններն անգաղաք գէնք կը
չինեն, թնգանօթ եւ ուսմի կը ձու-
լին : Ասանցմէ զատ Անգլիոյ զինուո-
ր գործարաններէն եւ լմանաւորապէս
Պրիւսիէն մէջ հարիւր հազարներով ճառ-
բօ կը հասնի Գաղղիա :

Պէնէլեպայի լրագիր մը կըսէ թէ
մինակ լիլի մէջ 200000 զօրք գումար-
ւած է, որք պէտք եղած ժամանակ
փարիզ պաշարող գերմանական զօրաց
վրայ պիտի քալին :

Պէլիֆորի մէջ ալ բաղմադուող զօրք
գումարուած են, եւ 20000 ալ Լիւսին
կ'սպասուին :

Միայն կարի եւ Պուշ—Տիւ—Ռօնի
գաւառացի մէջ գրուած զինուորնե-
րուն թիւը 50000ն անցնի է :

Նոյն խի Ալգալի եւ Լօրէնի գա-
ւառացի մէջ որք Բրուսիացի ձեռքն
են, գաղտնի զինուորադրութիւն կը-
լլայ եւ զրեթէ բոլոր երեսասարգնե-
րն հետզհետէ փախչելով շարժուն
պահապան զինուոր գրուելու կերթին :

Պանդոններու եւ ճաշատանցմէջ սպա-
սուոր չէ մնացեր, փախեր զինուոր
գրուելու են :

Յորդանիէն Ֆրանքֆորթի ժուրնալ
ըսողին կը գրեն թէ Պատենի զօրաց
գունդ մը Միւլհուզի մէջ գրաւուած
գէնքերը Մօնտէյոյ փոխադրած ժա-
մանակ, Նէօ—Պրիդարի Գաղղիական
հրամանատարը վրայիցն յորձակելու բու-
լը զօրքը գերի բռնելու եւ զէնքերն
ալ ձեռու ընտն առելու է :

Քօլօնիայի կաղէթ լրագիրն ալ հե-
տեւեալը կըստայ սեպտ. 9 թուով
« Գերմանական զօրաց ձեռքն ե-
ղած ճանրաներն օրքան զօր փոխադա-
ւոր կըլլան, բանակին պաշար եւ մը-
թերք տանել անհնար եղած է առանց
բազմութիւն զօրաց ուղեկցութեան :

« Վօքսթըրի մօտ 1500 չափ զին-
եալ Գաղղիացիք Պալիէրայի զօրաց
հատուածի մը վրայ յորձակելով ամե-
նէն ալ գերի բռնեցին : Այս բռնի-
րուածներուն մէջ է Պէլիւրի ոստիկա-
նութեան տեղակալ Պ. Հօբ, որ
Բրուսիոյ լրագրաւորէն կանխած ըլ-
լալով բանակը կերթար երկուք ալ
զինուորական բժշկի կային, բայց
երկու օր ետք թող աքուցանուի իւր
զօրականներն ու անոնց հրամանատար-
ները, ինչպէս նաեւ Պ. Հօբ, Պորտօ
տարուեցան : »

Ռուսիոյ լրագրաց մեծ մասը ջերմ
համակրութիւն կը յայտնեն Գաղղիաց-
ւոյ :

Բեդրապուրի Նուիօ—Թան լրագի-
րը հետեւեալ խօսքերը կ'ընէ, որ Ռուս
լրագիր մը համար զարմանալի են :

« Նաթօլէան կայսեր գերի իյնալը
բարեբաղդութիւն մ'է Գաղղիոյ հա-
մար, եւ պէտք է շնորհակալ ըլլայ
Բրուսիոյ, որովհետեւ, աղջային պատե-
րադմի մը նշան կըլլայ : Սփիկա վաթ-
ճանին սկզբնաւորութիւնն է որ կրնայ
Բրուսիացի բոլոր նախնիքաց յաղ-
թութիւններն ոչնչացնել, եւ Գաղղ-
իացիք կրնան քրքիջներով Կայստա-
նանել անոնց Ալգալի եւ Լօրէնի վը-
րայ ըրած պահանջանց : »

« Միք գաւառութիւն չենք ընելու,
այլ կը յիշենք միայն ինչ որ ամեն ժա-
մանակ եղած է : Աղբ մը երբոր իր
չղթ անիւրէն զերծ անելով աղատութեան
բարիքները ժամանակ մը ճաշակէ,
անընկճելի կըլլայ, եւ վերջապէս կը
յաղթէ այն ժողովրդոյ, որը իրենց
տիրջը համար արիւննին թափելէ
զատ ուրիշ երջանիութիւն չեն ձանչելու
Աղբ մը որ հաստատութեամբ միտքը
կը գնէ օտարի կամաց գլուխ չձուել
հակալ մ'է, որոյ առջեւ աշխարհի բո-
լոր Միջքէներն եւ Ֆրեաների ճառ-
ւերը խեղճ թզուկներ են : »

Բեդրապուրի Նուիօ լրագիրն ալ
հետեւեալ տողերը կը հրատարակէ :

« Լօրէնի եւ Ալգալի գաւառներ-
րուն Գաղղիոյ ձեռքէն բոլորովն առ-

նուիր խնդրելու համար Գերմանիոյ
մէջ խաղաղուած ուղերձներու կատա-
կերգութիւնը քիչ ժամանակէն կրնայ
նորոգել Աւստրիոյ եւ Ֆրանցերիոյ գեր-
մանական գաւառացի եւ նոյն խի մը
Պալիսիի երկիրներուն համար ալ :

« Դիւրաւ կը հասկցուի որ այս
պարագայիս մէջ Գերմանական մա-
մուլը քաղաքապետական մեքենայու-
թեանց աղբեցութեան ներքեւ է :
Բայց հին աղբակցութեանց անուշով
այսպէս երկիրներ պահանջելու հետա-
քըքրաչարժ սկզբունքն անգամ մը
ընդունուելէ ետեւ, ամեն կերպ հա-
ւանականութեանց սպասել պէտք կըլ-
լայ, եւ դարմանալու չէ՝ օրինակի հա-
մար՝ եթէ Սլաւ աղբակցութիւններն ալ
ուղերձներ խաղաղութեւն են, որպէս
զի Բրուսիա ալ ժամանակաւ Սլաւ ե-
ղող երկիրները ետ տայ, մանաւանդ
որ այդ երկիրները գերա տնչալի գեր-
մանացած չեն, որչափ Ալգալի եւ Լօ-
րէն գաղղիացած են : »

Գերմանիոյ ամառիկապետական թեր-
թերն ալ Գաղղիացիոց համակրութիւն
յայտնել սկսած են : Ասանցմէ Պէլիւրի
Ալգալի լրագիրը Բրուսիոյ քաղաքա-
կանութեան հակառակ յօդուած մը
հրատարակելով, խմբագիրը Տօքթօր
վէպս երեք ամիս բանտարկութեան
դատաւարաւորեցան :

Վարչախայէն հետեւեալ կը գը-
րեն Պալիսիի կաղէթ լրագրին :

« Ռուսիոյ մէջ զինուորական սլա-
տաւորութիւնները մեծ փութով յու-
ռաւ կը տարուին՝ առանց ձայնի թըն-
դանօթ քաշող ձիւրն ամբողջայնելու
համար շատ ձի գնուեցաւ, եւ Բեդ-
րապուրի մէջ Պ. Նուիէլի զինուոց զօր-
ծարանին 800 միլիոնայէնօղ ապագըր-
ուեցաւ հօկտեմբեր 1 ին տալու պայ-
մանաւ : »

« Ռուս լրագրաց յեղձուածնք մա-
սը կ'սպասեն որ Բրուսիա իրեն հաշ-
տութեան պայման պիտի պահանջէ
Ալգալի եւ Լօրէնի գաւառները, թէ եւ
Գերմանիոյ մեծնալուն գէտ են, բայց
կը նախատեսեն որ չէզոք տէրութիւն-
ները չպիտի կրնան այս երկու երեւ-
մէն Գերմանական գաւառներուն վե-
րջտուն Գերմանացի գաւառին ար-
դեւելու Բրուսի այս վերադարձը կա-
տարուած ժամանակ Բրուսիոյ համար
ալ պատշաճ փութադրութիւն մը կը
խնդրեն՝ առանց որով կերպով իրենց
ուղեւոր ցուցնելու : Այս պահանջումը
ըստիցներու համար Բրուսիական զօրքե-
րը պատերազմի պատրաստ վիճակի
մէջ պիտի գրուին : »

Երբեքն Գաղղիոյ Պատերազմական
զօրքոց պաշտօնետոյ եւ Նաթօլէան Գ
կայսեր մանրէմ խորհրդական վայեան
մարաջախտը սեպտ. 17ին ձերբակալ
եղաւ փարիզի շրջականները : Այս ձեր-
բակալութիւնն հետեւեալ կերպով կը
ձանադանէ փարի—ժուրնալ լրագիրը :

« Եթէ կ'իրիկուան ժամը չորսին մի-
ջոցները փարիզի մէջ լուր մը տարա-
ծեցաւ կոյծակի արագութեամբ փա-
րիզի պաշտօնատնութեան մասնաժողո-
ւոյ նախկին անգամ վայեան մարա-
ջախտը ձերբակալ եղել էր :

« Ահաւասիկ այս տարօրինակ դէպ-
քին վրայ մեր հաւարած տեղեկու-
թիւնները :

« Պ. վայեան փարիզի շրջականները
պարտելու հրամանագիր մ'ատանալով,
վէնէն գացելու եւ փարիզի ամբու-
թեանց վրայ աւելցած նոր ամբու-
թեանց յասակագրելը կը հանէր :

« Իր քով մարդ մը կար, որոյ հա-
մար կարծիք եղել է թէ Բրուսիացի
զինուորական պաշտօնակալ մ'էր, եւ
տեղեւոյն պահապան զինուորներն առ-
կէց մակարերելով թէ մարաջախտը
Բրուսիոյ թագաւորին լրտեսութիւն
կրնէր, զուով մը զայն կը ձերբակալէ
ընկերին հետ, եւ երկուքը մէկէն
կառք մը գրուելով փարիզ կը գրկուին
խումբ մ'աղբային պահապան զինուո-
րաց ուղեկցութեամբ :

« Պատիւիցի հրապարակը հասած
ժամանակին ժողովրդեան բազմու-
թիւնը կատարած մարաջախտը բռնել
կուղէ : Բայց Պ. կարնիէ—Բաժէս, որ
գիպուածով անկէց կանցներ, կառքը
մտաւ եւ մարաջախտն ու ընկերն իր
պաշտօնատնութեան ներքեւ առաւ :

« Մարդիկը նախ Օթէլ Տը Վիլ եւ
անկէց Լուիւր տարուեցան, ուր Թրօշիւ
զօրապետը կը նստի : »

« Բիլօլի փողոցին մէջ ժողովուր-
դը նորէն բռնել ուղեց մարաջախտը,
բայց աղջ այլն պահապան զինուորնե-
րը դէմ կեցան : Նոյն միջոցին երկու
մարդ « կեցցէ կայսր » գօշերով իսկոյն
բռնուեցան :

« Լուիւր հասնելով մարաջախտն
եւ կարնիէ—Բաժէս կառքէն վար իջան
պահապան զինուորներէն շրջապատ-
եալ Հասարակութիւնը լցուած էր
Բիլօլի փողոցին եւ փալէ—Ռօպայի
հրապարակին մէջ, միաձայն գոչելով
որ մարաջախտն անմիջապէս հրացանի
բռնուի : »

« Պ. կարնիէ—Բաժէս Ժողովրդեան
զրդուութիւնը հանդարտեցուց ըսե-
լով « Եթէ յանցաւոր է՝ խտու պի-
տի պատժուի : »

« Թրօշիւ զօրապետն այն միջոցին
Մօն—Վալէրիէն գացած էր, եւ ուշ
ժամանակ վերադարձաւ : »

« Կը խնդրենք որ այս տարօրինակ
դէպքը լուսաւորուի թէ՛ ընդհանու-
րին եւ թէ՛ վայեան մարաջախտին շա-
հուն համար : »

« Եթէ մարաջախտը դաւաճանու-
թիւն մ'ըրած է, ուրիշներէ աւելի
խտուութեամբ պէտք է պատժուի : »

Գաղղիոյ առժամանակեայ կառա-
վարութիւնը մահուան պատժոյն բար-
ձաւ որչեց, Հրամանագիրը քիչ օ-
րէն պիտի հրատարակուի Հասարա-

